ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ

Բ. գ. թ. Ն. Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Օտարաբանությունների և բառային փոխառությունների հարցի արծարծումը նոր երևույթ չէ: Լեզվի զարգացման տարբեր շրջաններում բոլորովին տարբեր մոտեցումներ են եղել և տարբեր դիրքերից են մեկնաբանվել բառային փոխառությունների և օտարաբանությունների գործածության հիմնախնդիրները: Արտահայտվել են տարբեր, իրարամերժ կարծիքներ՝ լեզվում դրանց կիրառության և դրանցից օգտվելու հարցի շուրջ: Այդ տարբերություններն, անշուշտ, պայմանավորված են եղել մի կողմից՝ ժամանակի լեզվական մտածողությամբ, մյուս կողմից՝ ժամանակի իշխող մտայնությամբ ու քաղաքական գործոններով: Բառային փոխառությունները լեզվի բառային կազմի լրացման մշտական աղբյուրներից են, որոնք հարմարվում են փոխառու լեզվի հնչյունական, գրային, ձևաբանական և իմաստային առանձնահատկություններին[1]: Օտար լեզվից փոխառություններ կատարելիս գրողը միշտ էլ հաշվի է առնում տվյալ լեզվի ավանդույթները: Փոխառության նյութ կարող են լինել բառի հնչյունական կազմը և իրական այն նշանակությունը, որը բնորոշ է բառի կայունացված կիրառությանը: Եթե օտարազգի բառին հատուկ է բազմիմաստությունը, ապա փոխ է առնվում այդ բառի միայն մեկ նշանակությունը և ոչ թե նրա ամբողջ իմաստային համակարգը: Օտարաբանությունները՝ մայրենի լեզվում գործածված այլալեզվյան օտար բառերն ու դարձվածքները[2], արևմտահայ լեզու են ներթափանցել բավական մեծ քանակությամբ, սակայն տարբեր հեղինակներ տարբեր չափով են օգտվել դրանցից: Օտարաբանությունները կարող են վերցված լինել տարբեր լեզուներից:

Օտարաբանությունների և փոխառությունների ուսումնասիրությունը կատարվում է գրական երկի վերլուծության շրջանակներում, մասնավորապես ըստ Տ.Չրաքյանի «Ներաշխարհ» ստեղծագործության: «Ոճագիտություն» գիտաճյուղի դասավանդման ընթացքում, պատկերավորման և արտահայտչական միջոցներն ուսումնասիրելիս ուսանողները

---

[1] А. А. Реформатский, Что такое термин и терминалогия, М., 1959. էջ 53:

[2] Ֆ.Հ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու, Երևան.,1976, էջ 104:

պետք է որոշ գիտելիքներ ստանան գեղարվեստական գրականության լեզվի բառապաշարի առանձնահատուկ շերտերի՝ օտարաբանությունների և փոխառությունների վերաբերյալ: Մենք բացատրում ենք լեզվական փոխառությունների միանգամայն օրինաչափ երևույթ լինելը և ներկայացնում այն փաստը, որ հայերենը տասնյակ հարյուրավոր բառեր է վերցրել հին հունարենից, եբրայերենից, պարսկերենից, վրացերենից, ռուսերենից, վերջինիս միջոցով՝ եվրոպական լեզուներից, ինչպես նաև հայերենից էլ որոշ բառեր են անցել վրացերենին, ռուսերենին և այլ լեզուների: Ուսուցման ընթացքում միաժամանակ ավելացնում ենք, որ առողջ և բնականոն ճանապարհով կատարված փոխառությունները ոչ միայն չեն վնասում, այլև մեծ չափով հարստացնում են տվյալ լեզուն: Հենվելով բառագիտությունից ուսանողների ձեռք բերած գիտելիքների վրա, բացատրում ենք, որ փոխառությունները բոլորովին էլ չեն վնասում տվյալ լեզվի ազգային ինքնատիպությանը, որովհետև վերջինիս համար բնորոշը քերականական կառուցվածքն է, որ երբեք չի կարող փոխառնվել: Փոխառյալ բառերը դրվում են տվյալ լեզվի քերականական կառուցվածքի տրամադրության տակ և ստանում միայն ազգային լեզվին հատուկ վերջավորություններ, հոդեր, քերականական այլևայլ ձևեր: Գրական երկերի լեզվաոճական քննության ընթացքում ցույց ենք տալիս, թե տվյալ գրողը որքանով է ճիշտ վարվել փոխառությունների գործածության հարցում, գրական հայերենը չունի՞ արդյոք այն բառերը, որոնք օգտագործել է նա:

«Ներաշխարհում» գործածված օտարաբանությունները ֆրանսերեն, անգլերեն, հայատառ ֆրանսերեն բառեր են: Տ.Չրաքյանը «Ներաշխարհ» արձակ պոեմում ամեն կերպ խուսափել է թուրքերեն բառերից, չնայած նրա ստեղծագործությունների բնագրերում հանդիպում ենք նաև թուրքերեն բառերի փոքրիկ ցանկի: Ներաշխարհային օտարաբանությունները հեղինակի երկի բառապաշարի առանձնահատուկ շերտն են կազմում: Գաղիաբանությունները՝ ֆրանսերենից վերցված օտար բառերը, հանդես են գալիս որպես սիմվոլիստական–տպավորաշտական արտահայտչականության միջոցներ: Վերջիններիս նպատակային օգտագործումը օրինաչափ երևույթ է գեղարվեստական գրականության մեջ: Սխալ կլինի այնպիսի տպավորություն ստանալ, թե օտարաբանություններն ու փոխառությունները նույն բանն են: Ամենևին ոչ: Փոխառվող բառը լեզուն չի կարող մեքենայաբար ընդունել որպես իրեն հարազատ միավոր: Բառային փոխառությունը սերտորեն կապված է արտաքին աղբյու-

րից յուրացվող բառի վրա լեզվի գործուն ազդեցության հետ: Այս դեպքում տեղի է ունենում այդ բառի՝ այսպես կոչված վերաձևում՝ հնչյունական և քերականական տեսակետից: «Ներաշխարհ» արձակ պոեմում դրանք կուլտուր–պատմական արժեք ունեն: Երբեմն թվում է, թե այդ բառերը մինչև վերջ էլ չեն «յուրացվում» բնագրում, և դա բնական է, քանի որ դրանք յուրացվում են միայն այնքանով, որքանով կարող են օգտագործվել որպես այս կամ այն հասկացության անվանում: Օտարազգի բառերի յուրացումը առաջին հերթին կապվում է նորաբանությունների հարցի հետ: Տ.Չրաքյանի կողմից գործածված օտար բառերի կողքին նա շատ անգամ հայերեն համարժեքն է ներկայացնում՝ ուղեցույց ունենալով այն հանգամանքը, որ լեզուն, այն էլ արևմտահայերենը, հնարավորինս պետք է մաքրել ավելորդ և անհարկի օտար բառերից: Նա հստակ տարբերում է լեզվի բառային միավոր դարձած իսկական փոխառյալ բառերն այն օտարազգի բառերից, որոնք արտաքուստ պատկանում են լեզվին, բայց փաստորեն դուրս են մնում նրա բառային կազմի արդեն յուրացված բառապաշարից: Որպես ապացույց ասվածի կարելի է բերել բազմաթիվ օրինակներ[1]: Հմմտ՝

«Բնականոն (norm.) հիքության մը խաղաղության մեջ, բնականոն ու հանդարտ վիշտի յայտակերպումներուն մեջ (manif.) իրերուն ու կահերուն, սենյակին բնակչին անաշխարհայնությունը, խոկուն, անոնց զանազանությանց ետև ազոտապես միացած և անսահման զրկանքի մը մեջ հեռացած անշրջագծված երանակն համադրույթի մը կնգտի»: (143):

«Հոն մտածումը ճշմարիտ բարձրախոհանքը (anag.) կ՚ըլլայ:.»(153)

«Անհատականությունն աններող է (intoler) է ամենուրեք»: (156)

«Ամեն ինչ կվերածվի թրթռումին ու շարժման, այսինքն սա բառին. Ձգտում (tend.)»:(167)

«Հանճարը, ելեկդրոսանքը, հավատքը, կամքը, սերը, ծանրությունը (gravita)»: (167)

Հայտնի փաստ է, որ հայերը հնագույն ժամանակներից սկսած, շփվելով տարբեր ժողովուրդների հետ, կատարել են բազմաթիվ փոխառություններ: Մեր լեզվում կատարված տեղաշարժերի արդյունքում նկատում ենք, որ օտար փոխառությունների զգալի մասը ժամանակի ընթացքում դուրս են գալիս գործածությունից կամ էլ փոխարինվում են հայերեն

[1] Բնագրային բոլոր օրինակները բերվում են Տ.Չրաքյանի երկերի լիակատար ժողովածուից, Երևան, 1980թ.:

համարժեքներով: Ըստ Հր.Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» տվյալների՝ հայերենը փոխառություններ է կատարել պարսկերենից, հունարենից, արաբերենից, եբրայերենից, ասորերենից, բայց այդ բառերի հիմնական մասը վաղուց արդեն գործածական չէ: Նույն օրինաչափությունն է նկատվում նոր ժամանակների փոխառություններում: Լեզուն իր զարգացման բոլոր շրջաններում էլ չի խուսափել փոխառություններից՝ որպես բառապաշարի հարստացման յուրահատուկ միջոցի: Արևմտահայերենն ընդհակառակը, ամեն կերպ ձգտել է ազատվել ոչ միայն թուրքաբանություններից, այլև եվրոպական բոլոր բառերի համար պարտադիր պայման է եղել ունենալ իրենց հայերեն համարժեքները լեզվում: Այդ երևույթի պատճառն Ա. Այտընյանը այսպես է մեկնաբանում. «Մեր ժողովրդական խոսվածքին եկամուտ օտարությանց չափազանցությունն էր, որ աչքերը բացավ և լեզվի ազգայնությանը մեջ հավասարակշռության կորուստը պատճառ ու դրդիչ եղավ այն մեծ նորոգության առաջին քայլն առնելու, ամեն օտարություն այնպես վրեժխնդրությամբ բնաջինջ ընելով՝ որ այսօրվան օրս քիչ կա լեզու անչափ յուր սեպհական տարրերեն բաղկացած՝ ինչչափ այս ուղղված աշխարհաբարը»[1]: Դասավանդման ընթացքում ուսանողների ուշադրությունը հրավիրում ենք այն փաստի վրա, որ բառային փոխառությունների հարցում արևմտահայերենը չափազանց խիստ վերաբերմունք է ցուցաբերում, որն, իհարկե, չի ազդում Տ. Չրաքյանի ոճական նախասիրությունների վրա և հեղինակը «Ներաշխարհի» բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցներից մեկն է համարում փոխառություններով բառապաշարի և բառային կազմի համալրումը, չնայած այն հանգամանքին, որ փոխառությունն այն երևույթն է, երբ լեզուն իր չունեցած բառը կամ արտահայտությունը վերցնում է այլ լեզվից[2]: Տ.Չրաքյանը բոլոր փոխառությունների կողքին ունի հայերեն համարժեքներ և ավելին, փոխառությունները դրվում են փակագծերում և հայերեն համարժեքները դրվում են նրանցից առաջ:

Լեզվի զարգացման տարբեր փուլերում փոխառությունները կարող են վերածվել օտարաբանության. «Օտար լեզուներից փոխ առնված, վերցրած բառերը փոխառություններ են, քանի դեռ տվյալ լեզվի բառապաշարում նրանք չունեն իրենց համապատասխան, ազգային համարժեք

---

[1] Ա.Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան,1987,էջ 237:

[2] Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Երևան., 2003, էջ 152:

ձևերը, իսկ երբ արդեն դրանց համարժեքներն ստեղծվում են տվյալ լեզվի համապատասխան բառակազմական միջոցներով, նշված փոխառությունները դառնում են օտարաբանություններ[1]: Այսպիսով, Տ. Չրաքյանի բառապաշարի ոճական յուրահատկություններից մեկն էլ այն է, որ փոխառությունները և օտարաբանությունները հանդես են գալիս միահյուսված և ոճական տեսակետից ակտիվ են: «Ներաշխարհի» քննությունից պարզվում է, որ Չրաքյանը տուրք չի տվել անհարկի փոխառություններին, այլ «Ներաշխարհի» բառային կազմը հարստացրել է հայերեն համարժեքներ ունեցող օտար բառերով, որոնց երբեք օտար լեզվամտածողության ներթափանցումներ համարել չի կարելի:

Ստորև ներկայացնում ենք «Ներաշխարհ» արձակ պոեմում հանդիպող օտար բառերը, որոնց մեծ մասի համար Չրաքյանն ինքն է ստեղծում հայերեն համարժեքներ:

Բառացանկը ներկայացնում ենք ըստ բնագրում հանդիպելու հերթականության.

ֆրանսերեն – հայերեն

1. Professeur – պրոֆեսոր
2. Paysage – բնանկար
3. Canacle – խմբակ, ընկերություն
4. Mimique – դիմախաղ, միմիկա
5. Criard – ճղճղան, ճչացող, բնագրում՝ շլացնող
6. Banalite – պարզունակություն
7. Appliquer – բնագրում՝ կապել, տրամադրել
8. Lilas – մանուշակագույն
9. Evolution – զարգացում
10. Ideal – իդեալ
11. Dominant – տիրապետող
12. Substantiel – էական
13. Touriste – զբոսաշրջիկ
14. Musicienne – երաժիշտ
15. Interpreter – մեկնաբանել, բացատրել
16. Absurde – անհեթեթություն, աբսուրդ
17. Fuque – խուսանվագ, ֆուգա

[1] L. Եզեկյան, Ոճագիտություն, Երևան., 2003, էջ 152:

18. Fusee՛ – հրթիռ, բնագրում՝ պայթող պղպջակներ
19. Hygiene – հիգիենա
20. De՛cider – որոշել
21. Passage – անցում
22. Hotel – հյուրանոց
23. Artiste – արտիստ
24. Bar – սրճարան, բար
25. Taverne – պանդոկ, խորտկարան
26. Editeur – հրատարակիչ
27. Librairie – գրախանութ
28. Croque – ճեպանկար, ուրվանկար
29. Bibliotheque – գրադարան
30. Caprize – քմահաճույք
31. Orchestre – նվագախումբ
32. Billiard – բիլիարդ
33. Gladiateur – գլադիատոր
34. Raccourci – դիրք, Չրաքյանի բառով՝ «սղամփոփ» կեցվածք
35. Pathologique – ախտաբանական
36. Manie de persecutons – հետապնդման, հալածման մանիա, մոլեգարություն
37. Idee՛ fixe – սևեռուն գաղափար
38. Poesie – բանաստեղծություն
39. Se՛mite – սեմիտ
40. Brasserie – գարեջրատուն
41. Condense՛e – խիտ, հոծ
42. Zoologie – կենդանաբանություն
43. Philosophie – իմաստասիրություն, փիլիսոփայություն
44. Sociologie – սոցիոլոգիա
45. Psichologie – հոգեբանություն
46. Nevrasthenie – նյարդաթուլագարություն, նևրասթենիա
47. Humilier – ստորացնել, վիրավորել
48. Manifester – հայտարարել, արտահայտել
49. Egoisme – եսասիրություն
50. Caricature – ծաղրանկար

51. Pose – դիրք, ձև, կեցվածք
52. Inertie – անտարբերություն, իներտություն
53. Pratique – գործնական, պրակտիկ
54. Acte – գործողություն, արարք
55. Contemplafit – հայեցողական, ինքնամփոփ, խորհրդածական
56. Plan – ծրագիր, պլան
57. Accumulation – կուտակում
58. Boite a peinture – ներկատուփ
59. Palette – ներկապնակ
60. Composition – կառուցվածք, կոմպոզիցիա
61. Capital – դրամագլուխ, կապիտալ
62. Intensite – զորեղություն, ինտենսիվություն
63. Toile – կտավ
64. Effect – տպավորչություն, ազդեցություն, էֆեկտ
65. Exotisme – տարերկրապաշտություն, էկզոտիզմ
66. Ton – հնչերանգ, տոն
67. Voulgarisation – գռեհկացում, հասարակացում
68. Air d՛impostance – ինքնակոչություն
69. Brouillon – սևագրություն
70. Anagramme – գրաշրջություն, անագրամմա
71. Pelisie – մանրածալքավոր շրջազգեստ, պլիսե
72. Entile – էություն
73. Objective – անկողմնակալ, օբյեկտիվ
74. Prive՛e – մասնավոր
75. Mystique – միստիկական
76. E՛ducalle – կրթված, դաստիարակված
77. Note – երանգ, շունչ
78. Bon sens – ողջամտություն
79. Originalite՛ – ինքնատիպություն, յուրօրինակություն
80. Idealite՛ – անթերի, իդեալական
81. Analise – քայքայում, վերլուծություն
82. Synthese – համադրում
83. Snobisme – պճնամոլություն
84. Cordonner – համադրել, ի մի բերել, իրար կապել

85. A´ tout pris – ընդհանուր առմամբ
86. Colise – փաթեթ
87. Analiseur – վերլուծող
88. Initiateur – նախաձեռնող
89. Sinecure – լավ վարձատրվող անաշխատ պաշտոն
90. Scene – պատկեր
91. Comedie – կատակերգություն, կոմեդիա
92. Cocotle – տղամարդու հաշվին ապրող թեթևաբարո կին, կոկետկա
93. Se´rie – շարք, բանաստեղծաշար
94. Zinkografier – ցինկոգրաֆիա
95. Socialiste – ընկերավարական, սոցիալիստ
96. Livresque – գրքային
97. De´raison – ոչ ճշմարիտ
98. The´orie – տեսություն, թեորիա
99. Me´tapsychie – հոգեզանցություն
100. Esprit fort – զորեղ միտք
101. Objecteur – կրոնական նկատառումներով զինվորական ծառայությունից խուսափող անձ
102. Spiritualiste – ոգեհարցական
103. Heroicomique – հերոսակատակերգական
104. Insoupconne´ – անկասկածելի
105. Intervalle – տարածություն, ինտերվալ
106. Romantique – ռոմանտիկ, երազային
107. Lyrique – քնարական

1. Արևմտահայերեն բառացանկ

1. Կարկել – լռեցնել, կարկամեցնել
2. Մեզե (մեզեապաշար) – աղանդեր (աղանդերի պաշար)
3. Կազ – նավթի, գազի լամպ
4. Լաստիկ – ռետինե կրկնակոշիկ
5. Սարված – սարք
6. Ֆելլահ – բատրակ
7. Ատրաշեկ – շիկացած, կրակի նման շեկ, հրատեսիլ
8. Էվելոք – ավելիով

9. Խմպլլներ – անլուրջ, թեթևսոլիկ մարդիկ
10. Չուգար մեխանաներ – գինետներ
11. Բեմբասաց – ատենախոս, քարոզիչ
12. Գրպան պարարել – գրպան լցնել, ուռճացնել

2. Հայատառ ֆրանսերեն բառացանկ

1. Ֆանթեզի (ֆր.) – երևակայություն, ֆանտազիա
2. Քռավաթ (ֆր.) – փողկապ
3. Վաքանս (ֆր. – արձակուրդ
4. Տռամ (ֆր.) – դրամա
5. Քառդ (ֆր.) – բացիկ, նամակ
6. Օրիժինալ (ֆր.) – ինքնատիպ, օրիգինալ
7. Անվլոբ (ֆր.) – ծրար
8. Էսփրի (ֆր.) – միտք, խելք

3. Թուրքերեն բառացանկ

1. Խապար (թուրք.) – լուր, տեղեկություն
2. Պօյամիշ ընել (թուրք.) – խաբել, մոլորեցնել
3. Խալպ (թուրք.) – անարժեք բան
4. Պեխապեր (թուրք.) – անտեղյակ
5. Գայմագամ (թուրք.) – գավառապետ
6. Քեաթիպ (թուրք.) – գրագիր
7. Գոմանտան (թուրք.) – հրամանատար

Բառացանկը ներկայացնելուց հետո ուսանողներին առաջարկում ենք վերջինիս լեզվաոճական քննությունը կատարել նորագույն մեթոդներից որևէ մեկով: Իբրև առաջին քայլ ուսանողներն առանձնացնում են տվյալ դասի մեջ շեշտադրվող հիմնական հասկացությունները՝ օտարաբանություններն ու փոխառությունները: Երկրորդ քայլն ուսանողների համար որոշակի նպատակների բացահայտումն է: «Ի՞նչ եմ ուզում, որ ուսանողներն այս դասից սովորեն» հարցի օգնությամբ դասախոսը փորձում ենք առանձնացնել այն հմտությունները, ընկալումները, փաստերը, որոնք ակնկալում ենք սերմանել կամ հղկել օտարաբանությունների և փոխառությունների ուսուցման միջոցով: Հասկացությունների և նպատակների առանձնացնելուց և մատնանշելուց հետո անցնում ենք դասի պլանավորման հաջորդ փուլին:

1. **Ներածություն-կողմնորոշում:** Այս փուլում ուսանողների առավելագույն ուշադրությունն ենք հրավիրում մասնագիտական գրականության մեջ թեմային առնչվող տեսական նյութերի վրա:

2. **Նպատակների սահմանում:** Ուսանողներին ներկայացնում ենք տվյալ դասի նպատակները: Դրանց իրացման համար հանձնարարում ենք Տ.Չրաքյանի ստեղծագործությունից դուրս գրել փոխառություններն ու օտարաբանությունները և բացատրում, որ դրանց ընդհանրություններն ու տարբերությունները կարելի է ներկայացնել Վեննի դիագրամի օգնությամբ:

3. **Ուսուցողական աջակցություն:** Երբ ուսանողներն աշխատում են, շրջում ենք խմբից խումբ և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ցուցումներ տալիս:

4. **Մոդելավորում:** Հնարավորության սահմաններում, ցուցադրում ենք ներկայացվող հասկացությունների աղյուսակ և պատասխանում ուսանողների հարցերին:

5. **Ընկալման ստուգում:** Մեր փորձաքննության արդյունքում պարզել ենք, որ ուսանողները ապահովում են օտարաբանությունների և փոխառությունների 75-80 տոկոս յուրացման մակարդակ:

6. **Վերահսկվող գործնական աշխատանք**: Ուսանողներին կարող ենք հանձնարարել աշխատել 4-5 հոգիանոց խմբերով՝ ուշադրությամբ հետևելով աշխատանքի ընթացքում նրանց ապահոված առաջադիմությանը: Այսկերպ հնարավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն ուսանողներին, որոնք անցյալում լեզվաոճական վերլուծությունների կատարման դժվարություններ են ունեցել:

7. **Ինքնուրույն-գործնական աշխատանք**: Այսօրինակ աշխատանքը պետք է բաղկացած լինի ընդամենը տասը կամ տասնհինգ րոպեանոց հանձնարարությունից: Ինքնուրույն աշխատանքը չպետք է օգտագործվի որպես պատկերավորման համակարգի դասավանդման ռազմավարություն, այլ միմիայն որպես ուսանողների՝ արդեն ըմբռնած հասկացություններն ամրապնդելու միջոց

8. **Գնահատում-եզրափակում:** Գնահատվում են խմբերը՝ գնահատման սանդղակով՝ ռուբրիկով:

Այսպիսով, ամփոփում ենք և նշում, որ օտարաբանություններն առավել շատ գործածվում են գեղարվեստական գրականության մեջ՝ ոճական հատուկ նպատակով: Դրանք գրողը գեղարվեստական–ոճական

հատուկ նպատակներով գործածում է գեղարվեստական խոսքում[1]: Տ. Չրաքյանը գիտակցաբար գործածում է և՛ օտար բառը և՛ հայերեն համարժեքը: Այն, որ օտար բառերը տրվում են փակագծերում և կրճատ տարբերակներով, ևս խոսում է այն մասին, որ Տ. Չրաքյանը ոչ թե տուրք է տվել դրանց, այլ գործածել է նյութը խորհրդավոր դարձնելու նպատակով: Դրանք գործածվում են բացառապես արտահայտչական նշանակությամբ և ավելի շուտ ոչ թե օտարաբանություններ, այլ հեղինակային փոխառություններ են՝ կատարված գեղարվեստական, արտահայտչական նկատառումներով: Օտարաբանություն-փոխառությունները ծառայում են որպես ներաշխարհային միջավայրի կոլորիտի ստեղծման միջոց և ամենևին էլ արևմտահայ լեզվի պակասը լրացնելու համար չեն փոխառնվել: Դրանց գործածությունը հեղինակի կողմից իրացվում է ոճական-արտահայտչական դրդապատճառներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էդ. Չրբաշյան, Գրականագիտության ներածություն, Երևան,1996, էջ 146:
2. Ֆ. Հ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու, Երևան,1976, էջ 104:
3. А. А. Реформатский, Что такое термин и терминалогия, М., 1959. էջ 53:

[1] Էդ. Չրբաշյան, Գրականագիտության ներածություն, Երևան,1996, էջ 146:

ОБУЧЕНИЕ ЗАИМСТВОВАНИЯМ И ИНОЯЗЫЧНЫМ СЛОВАМ СОВРЕМЕННЫМИ ТЕХНОЛОГИЯМИ

АНТОНЯН Н. С.

РЕЗЮМЕ

Изучение лексических заимствований и иноязычных слов в лингвистике не является новой проблемой. В различные периоды развития науки о языке к проблеме использования и толкования иноязычной лексики и заимствований относились по-разному.

В данной статье обобщены и представлены новейшие методы изучения лексических заимствований и иноязычных слов— моделирование, проверка восприятия, контрольные практические работы и др. Автор указывает, что заимствованная и иноязычная лексика наиболее активно используется в художественном тексте с определенной стилистической целью. Их вплетение в художественную ткань определяется художественными задачами, разрешаемыми в произведении.

THE TEACHING OF BORROWINGS AND FOREIGNIZMS BY MEANS OF MODERN TECHNOLOGICS

N. S. ANTONYAN

SUMMARY

The excitation of the question of foreignism and borrowings is not a new phenomenon. During different stages of the development of the language there were different approaches and the problem of usage of borrowings and foreignism was explained from different points of veiw.

The article touches upon the up-to-date methods: the modeling, the checking of perception, controling practical work and so on. The lecturer summerizes and marks that foreignisms are mostly used in fiction. The writer uses those in the artistic speech on the artistic-stylistic purpose.